62. ԻՐԵՔ ՔՈՍԵՔ

Կէղնի, չէղնի մարդմ՝ ու կնիկըմ կէղնին։ Էդ մարդն է, օրըմ՝ կառնե զուր եզ, կէրթա քաղաք օր ծախե։ Կտանե շուկեն կօլըրցու, որն օր հ՝ըռաստ կիգա, չառնե։ Կառնե օր դառնա հ՝իգա ուր տուն, էնդիեն իրեք ախպեր կիգան, իրեք լէ քոսա կէղնին։

Կասին.—Ախպե՛ր, դու զէդա հորթիկ չըս ծախի՞։

Մարդն կասե.—Ջանը՛մ, իմունին եզ է, խոջա եզմ է, դուք՝ քո՞ռ եք, չը տեսնա՞ք, կէնիք հորթիկ ու բազար կէնիք։

Վել հասըլ, զմարդ աճիզ-թաճիզ կէնին, կխարին զեզ, հորթը-կու գնով կառնին ձեռքեն։ Մարդ կքերե զուր անկճի տակ, կթողե կիգա ուր տուն։ Կիգա ճամբու հետ կմեզե, կասե. «Իմա՞լ կէղնի, ես զիմ հայիֆ էդա իրեք քոսի մոտեն առնիմ։ Ախբր զիմ եզ հոր-թըկու մը գնով առան ձեռքես»։

Մարդ կիգա տուն, զուր եղելութեն կնկան կպատմե, կասե.—Կնի՛կ, զեզ տարա քաղաք, էկան իրեք ախպեր հ՝ըռաստ, իրեք լէ քոսա ին, զեզ էրեցին հորթիկ, ձեռքես առան, իմա՞լ էնինք զէդ հայիֆ առնինք էդ շներու մոտեն։

Կնիկ կասե.—Մա՛րդ, էդոր վրեն մարախ մ՝էնի, զէդ հայիֆ-քոսեներուն չընք թողի։

Մարդ էրկու-իրեք օր կմնա, կէլնի յոթ-ութ խաղ կիտա հ՚ա-ռեջ, կիդա քաղաք։ Կիգա ուրեն շուկի մեջ կօլըրցու, որն օր կիգա, բազար կէնե, չուլմըշի։ Կիգան էդ իրեք քոսեն կտեսնան, կասին.
—Վալլահի, մեկ լէ մըր ըիլմազ շինականն է։

Կիգան կասին.—Էդ հավերու ձրգեր կծախվի՞ն։

Մարդն կասե.—Քո՞ռ իք, ալամ աշխարհ գինան օր էդի խաղ է, իմա՞լ կէնիք հավու ձագ։ Մեկէլ օրն է, բերի զեզ կծախենք, հորթկու տեխ առաք, հըմկա լէ կուզիք զխազեր հավու ձագ էնեք, առնի՞ք։

Ի՞նչ կէնե շինական քոսեներու վրեն չկառնա։ Քոսեք կէլնին կխաբին, հավու ձագ կէնին զխազեր, ձեռքեն կառնին։ Մարդն է, կէլնի, քոռ-փոշման, զձեռք կդնե ծոցք, կառնե զփարեն, կդառնա կիգա տուն։

Կասե.—Կնի՛կ, ալավոկի խաղեր լէ գացին քոսլուխտա եզան խեչ, մեկ լէ տարա, քաղքի մեջ օլըրցուցի, կծախենք, էն իրեք քոսեն հ՚ըռաստ էկան, էրին հավու ձագ, առան ձեռքես։

Կնիկ կասե.—Մա՛րդ, ես քզիկ խելքըմ կսորվեցում, աման գիս լէ տար քաղաք, ես տեսնամ էդ քոսեք իմա՞լ մարդ ին։

Մարդն կասե.—Կնի՛կ, քու հունարն ի՞նչ է, օր կասես՝ զիս լէ տար քաղաք, հեղըմ զքու հունար սորվեցու, սորա ասա՝ զիս տար քաղաք, թը չէ, տանիմ զքզիկ լէ քոսեք առնին ձեռքես։

Կնիկ կասե.—Իմ խելքն էդա է, բի զէդա մըր էշ, քանիմ՝ օսկի կոխենք էդոր փըշքըլի մեջ, առնինք էրթանք քաղաք, քաշինք քոսեներու շանին։

Մարդն կասե.—Կնի՛կ, վալլահի, աղեկ կասիս։

Կբերե քանիմ՝ օսկի կխոթե փըշքըլի մեջ ու կառնե կիգա քաղաք, զկնիկ լէ հետ կբերե։ Կիգան շուկեն, զէշն է կօլըրցուն օր ծախին, քոսեք հ՚ըռաստ կիգան։

Կասին.—Ախպե՛ր, էդ ի՞նչ է կծախես։

Կասե.—Եզ է կծախեմ։

Քոսեք կասին.—Ջանը՛մ, էդի եզ հ՚որի՞ն է, չէ՝ էշ է։

Կնիկ կասե.—Եզ է։

Քոսեք կասին.—Եզ է, չը՞ք ծախի՞։

Կնիկն կասե.—Հ՚որի՞ չը՞նք ծախի, կծախենք, ըլլե դուք չը՞ք կառնա առնեք, մըր էշ օսկի կփշկլե։

Կասեն.—Օր ձըր իշան հըմալ հունար կա, հեղըմ թը՞ զ փըշքըլե, տեսնանք, օր օսկի կփըշկլե՝ առնինք։

Կնիկն կասե.—Կանեք էդա տեխ, հըմկա ձզիկ կցուցում։

Կէրթա խուրձըմ խոտ կառնե կիգա, կթալե իշու հ՝առեջ։ Էշն օր կուշտ կուտե, կսաղե փըշքըլել, օսկիք կիգան, կընկնին։ Քոսեքն, օր զէդի կտեսնան, կշիվարին մնան։

Կասին.—Ջը՞ք ծախի։

Կնիկն կասե.—Թ՝ե օր գինամ կէնիք եզան պես ու խաղերուն, խարեք զմեկն էրիք էշ, զմեկ լէ՝ հավու ձագ, առաք իմ իրկա ձեռքեն, չըմ ծախի, էդի իմ իրկան չէ, իմն է, ես կծախիմ։ Գինն հազար օսկի է, կառնիք՝ տվեք զգին, իտամ ձըզիկ։

Կէլնին հազար օսկին բազար կէնին, կնիկ կիտա զէշ, կառնե զուր հազար օսկին, կթորկե հ՝իգա ուր տուն։

Օր կիտա, կառնե զուր փարեն, կասե կնիկ քոսեսներուն.— Կանե՛ք ձզիկ բանըմ լէ կասեմ, իմ իշուն հունարքըմ կա, օր կտանեք հ՝օդեն կապեք, տակ լէ խալի պարզեք ու կթալեք չվանըմ ուր բերան կապեք հ՝առեշ ու իրեք օր լէ կփակեք զդուռ, կէրթաք, սորա կիգաք ուր ետևան, կտեսնաք, օր էն խրտար օսկի է փըշքըլի, հըսապ չկա։

Իրիկ ու կնիկ զէդ կասին, կառնին զուրանց փարեն, կթողեն էրթան։

Քոսեքն կառնին զէշն, կիգան կտանին հ՝օդե մը կապին, տակ խալի կփռին, չվան մը կթալին բերան, կապեն հ՝առեջ ու կթողեն կէրթան, իրեք օր հետևան չըն իգա, վըր չորսին օր կիգան, կտեսնան էշ պաղեր է ու մանցե։ Քոսեք կշիվարին մնան։ Կասին.— Ջանը՛մ, օղորդ է՝ մենք զհայու եզն էրինք էշ, զխաղն հավու ձագ, ըրլե էդա խդար վնաս չտվինք. էդ շինականն ու ուր կնիկ զմըր տուն ավիրեցին։ Հ՝էլեք էրթանք սպանիք զիրիկն ու զկնիկն, առնենք զմըր փարեն, հ՝իգանք։

Էնդոնք թըղ հ՝էլնին զուրանց թագարուկ տեսնան, էրթան գեղ, մենք դառնանք վըր իրկան ու կնկան։

Մարդ կասե կնկան.—Կնի՛կ, մեք խաբեցինք զէդոնք, զէդա օղյաթ հանեցինք էդոնց գլուխ, էդոնք քոսեքն ին, վաղ հասկցան, կիգան էդա տեխ զմզիկ կսպանեն։ Էկո, բանըմ մեղենք, օր ազատենք էդ անաստվածներու ձեռքեն։

Կնիկ կասե.—Մա՛րդ, էդոնք օր էկան էդա տեխ, ըի զէդա դիք լից ըռուփ, կախե իմ վզեն, առ զէդա չախոն լէ, ընծիկ ասե. «Կնիկ հ՝էլի հացի թագարուկ տես»։ Ես կէրթամ հացի թագարուկ կտեսնամ, կհ՝անգընամ, դու հ՝էլի հերսոտի վրես, ասե. «Հ՝ըմեն

օր իմ ախպրդանք հ՚ո՞դա կիգան, դու կերերաս»։ Ինատ էրե, հ՚էլի գիս թալ դետին, մորթե. տիկ կպատռի, արուն կէրթա, էնդոնք դինան թե դու դիս մորթեցիր, էլ քզիկ ձեն չեն էնի, հանդե, օր մորթեցիր խըլըսար, քիչըմ մանցի, հ՚էլի զէնա դանակ առ, րի քսե իմ յարի վրեն, հանդե ես կսաղնամ, հ՚էլնիմ կանիմ։ Էնդոնք, օր զէդ տեսան, աչք կթալեն դանակ, կդնեն կառնեն կէրթան։

Քոսեքն է, հէլան հ՚ընկան ճամբախ, հարցուցին զէդ գեղացու տուն ու էկան գացին մսաֆըր էղան։

— Բարի հ՚իրկուն։

— Աստծո՛ւ բարին։

Կվերցուն քոսեք կասեն.—Ախպրրդանք, մակար աշխարհք հըմլա խարնութենով է, դուք խաբեցիք զէշ տվիք մզիկ հազար օսկի, սորա էշ լէ սատկավ, մենք էկեր ենք։ յամ զմըր փարեն կիտաք տանենք, յամ զձզիկ կսպանենք։ Կէլնենք առնենք զմըր փարեն ու կէրթանք։

Մարդն կասե.—Ախպե՛ր, արեք նստեք, ուտենք խմենք, փարա չէ՞, սորա կէլնիք, կառնիք զձըր փարեն կէրթաք։

Քոսեք կիգան կնստին։

Մարդն կբոռա.—Կնի՛կ, հըմն օր իմ ախպըրդանք հ՚ոդա կի՞գան, ղքզիկ տեսնամ, ինչ օր պետքն է, էրե՛։

Կնիկ կէրթա հաց օր էփե բերե, կհ՚անգրնա։

Մարդ կբոռա.—Կնի՛կ, հա՛ց, հա՛ց։ Կնիկ անկաճ չէնե, կիգա կմտնի ներս, օր աման տանե, հաց հ՚ընա բերե։ Իրիկ կհերսոտի, կէլնի ու թալե գետին։ «Զքու բերան ք..., հ՚ըմն օր ախպըրդանք հ՚ո՞դա կիգան, դու հըմլա ծանդր-ծանդր կխըլվըլաս», ու դանակ հայ-հայ կնկա սիրտ։

Կնիկ հ՚էսօր ղմեռեր է, հոկցա հազար տարի հ՚առաշ է մեռի։

Քոսեք կշըվարին մնան.—Մենք ի՞նչ խալթ էր էրինք, հէլանք էկանք, էդա խաթա լէ հ՚ընկավ մըր վիզ։ Վաղ կարելի է տանեն բռնեն լէ, խոզի չընք էկի։

Մարդ լէ, նստուկ է, վըր կնկան կմտածե։ Քիչըմ դուշունմիշ կէղնի, կտեսնա օր էդ մարդոց սիրտ լէ կոտրավ, կասե.—Ախպե՛ր, դուք ձըր քեֆին էղեք, իմ մոտ հըմալ դեղըմ լէ կա, օր հըմկա կսաղցում, զիմ կնիկ հանեմ կանկցում։

Կէլնի կէրթա, կբերե զկնկա յարեն կլվա, զդանակ կքսե վրեն ու կնիկ կճըմըլդկա, կէլնի նստի։

Քոսեք կիշքին հ'իրար, կզարին մնան, կասին.—Էդ ի՞նչ բան է։

Կնիկ սաղցավ հ'էլավ, հաց բերեց կերան, իրեք ախպեր հ'էլան դուրս, հ'իրարու հետ մտածին, օր զէդ էրկու չախուն դնեն առնեն երթան։

Կէլնին դուրս, կասին.—Ախը՛ր, մենե հազար օսկի առավ, բերեց։ Էկեք դավի էնենք, շառ թալենք, բալքիմ զէդ չախըվներն ու մեկ-էրկու հարիր օսկի առնենք էրթանք։

Կմտնեն ներս, կասեն.—Հըմեն-հըմեն մըզի խաբեցիր, էկո զէդա դանկըներ ծախե մզիկ, առնենք էրթանք։

Մարդ կէլնի նազ.—Ջըմ ծախի, էդի ծախելու բա՞ն է օր ծախե։

Քոսեք հ'էրես կդնեն, զիրար կտանեն բերեն, վելհասըլ, իրեք հարեր օսկի լէ կառնե, կիտա զչախվրներ քոսեսներուն, կառնեն, կէրթան։

Կտանեն, մեծ ախպեր կասե.—Ախպե՛ր, տուր զչախըվներ ես կտանեմ իմ տուն։

Միշնեկ կասե.—Ե՛ս կտանեմ։

Պզտիկ կասե.—Տվեք ես կտանեմ։

Կիտան պզտիկ ախպեր կառնե կէրթա, կէրթա ազեկըմ մեխանեն կխմե ու կիդա, կասե.—Կնի՛կ, ընծիկ հաց ըի, կնիկ կհանդընա, օր կհանդնա, կքաշե չախուն կհասնի կնիկ, կմորթե դնե գետին, կբերե զէն մեկէլ չախուն կքսե վրեն, չքսե, սաղնալ չէղնի։ Կէլնի գիշերով կտանե կհորե, կբերե զչախվրներ կիտա միշնեկ ախպոր։

Ըստհաղ միշնեկ ախպեր կտանե, բառդա բանըմ մըհանա կբռնե, զկնիկ կմորթե, կբերե քսե մեկէլ չախուն վրեն, չսաղնա։ Կէլնի կառնե կէրթա զկնիկ, գիշերով կհորե, կբերե ղչախուն կիտա մեծ ախպոր։ Բանըմ չասե։

Դոր մեծ ախպոր կիդա, էն լէ կտանե զուր կնիկ կմորթե, կբերե զմեկէլ չախուն քսե վզին՝ չսաղնա, կտանե հորե։

Քոսեքն է, կտեսնան օր շինականն մեկ լէ ուրանց գլուխ դուպարա էրեց։ Իրեք օր կմնան, կէլնին կիդան։

Կնիկ դինա օր քոսեք մեկ լէ պիտի հ'իդան, կբերե գերեզմանըմ կփորե, կտանե զիրիկ կպահե, խեչ լէ շիշըմ ու քիչըմ քոմուր կդնե ու ծակըմ կթողե վըր գերեզմնին, կնստի կիլա։

Քոսեք կիդան, կտեսնան օր մարդ մեռեր է։

Կասին կնկան.—Քելե՛ էրթանք զգերեզման մզիկ ցուցու։ Կնիկ կիգա, կցուցու, կտեսնան օր ծակըմ կա վրեն։

Կասին.—Էդա ի՞նչ ծակ է։

Կնիկ կասե.—Իմ իրիկ ըռաղի կխմեր, շաբաթ օրնէ շաբաթ օր, կբերեմ մեկ-մեկ շուշա ըռաղի կհ՚ըլնամ էդ ծրկեն ներս օր խմե։

Մեծ քոսեն զքիթ կդնե վրեն, օր իշքե, ներսի դիեն մարդն շիշ կդնե կրակի մեշ ու կշշե, էնի զուր քիթ կբռնե։

Ախպըրտանք կասեն.—Ի՞նչ էղավ։

Կասե.—Դրեք զձըր քիթ, տեսեք։

Միշնեկ կդնե, շիշըմ լէ էնդոր քիթ կբռնե, քաշվի մեկ դին։

Պզտիկ կհարցու.—Ի՞նչ էղավ։

Կասե.—Դու լէ դիր զքու քիթ, տե՛ս, անուշ հոտըմ կիգա։

Էն լէ օր կդնե, շիշըմ լէ էնդոր քիթ կխըշխըշցու։

Իրեք քոսեք լէ կբռնին զուրանց քիթ ու կէրթան ուրանց տուն։ Շաբաթըմ էրկու կմնան, կսաղնան, կէլնին, կիգան։

Կասին.—Էրթանք զէդ մարդ սպանինք։

Մարդ լէ դաշտ լուծք կէնե, կնիկ կտեսնա օր էկան, կասե.—Մարդ, ըստհաղ զքու թաղարուկ տես, քոսեք օր էկան՝ խերն հաղ զքզիկ կսպանին։

Կբերե ղլուծք թարկ կէնե, կէլնի դոփըմ կշինե, կթալե վըր ծովուն։

Կտեսնա օր քոսեք էկան։

Կտեսնան զէդ մարդ վըր ծովուն կէրթա, կիգա։

Կասին.—Էդա մարդու հետ սատանի մազ կա։

Կէլնին զէդ դոփ լէ կառնին, կնստին վրեն, օր էրթան հ՚իգան։

Քոսեն կթալե զշախուն ու զդոփի չվան կկտրե։ Օր դոփի չվան կկտրե, քամին կառնե զդոփն ու կէրթա։ Կէրթա ծովու հ՚որթնշախ կհասնի չհասնի, յալա՜ դոփի քիթ կէրթա ծովու մեջ, իրեք քոսեք լէ հետ։

Նոր գեղացու յախեն կփրցնի, քոսեսներու ձեռքեն կազատի։

Աստծուց հ՚իշավ իրեք խնձոր. մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ լէ՝ անկաճ էնողին։